«ԳԱՎԱՌԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՎԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Լեզվական գիտելիքների ուսուցումը և սոցիալական
հմտությունների ու արժեքային համակարգի ձևավորումը
մայրենիի ուսուցման գործընթացում

Աշխատության հեղինակ՝ Մանուկյան Ելիսա Վեմիրի

Աշխատանքի ղեկավար՝ Հակոբյան Լիլիկ Երվանդի

ԳԱՎԱՌ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_____ 2

Մաս 1 _____ 3

Մաս 2 _____ 10

Եզրակացություն_____

Օգտագործված գրականություն _____ 14

Ներածություն

Յուրաքանչյուր ազգի առաջ ծառացած ամենակարևոր խնդիրը մայրենի լեզվի համակողմանի և մատչելի ուսուցումն է, քանի որ գիտությունների ուսուցման բանալին համարվում է մայրենի լեզուն: Հայոց լեզուն, որպես դասավանդման առարկա, իր մեջ ներառում է երկու կողմ.

1.բուն լեզվի իմացություն.մայրենի լեզվով հաղորդակցվելու, տաբեր բնույթի գրավոր և բանավոր խոսք/շարադրանք/կազմելու, ինչպես նաև այլ լեզուների յուրացման համար հիմնավոր պայման ստեղծելու կարողություն:

2.լեզվի քերականական կառուցվածքի իմացություն, որը լեզվական գիտելիքն է/ ուղղագրություն և ուղղախոսություն, բառագիտություն, ձևաբանություն , շարահյուսություն/:

Այս երկու կարևոր նախապայմաններն են ապահովում հանրակրթական դպրոցի տարրական և միջին դպրոցի 5-6-րդ դասարանների մայրենի լեզվի համակցված դասերը:

Արդեն մի քանի տարի է, որ միջին դպրոցի 5-րդ և 6-րդ դասարաններում հայոց լեզուն և գրականությունը ուսուցանվում է ինտեգրված՝ միասնացված գրքով՝ Մայրենիով:Մայրենիի դասերին, առանց միմյանցից անջատելու, ուսուցանվում է գրական և լեզվական նյութը: Տվյալ նյութի վրա աշակերտը սովորում է և' ընթերցանություն, և' բանավոր խոսք, և' գրականագիտական որոշ գիտելիքներ, և' լեզվական ու քերականական գիտելիքներ/5-րդ դասարանում «Ուղղագրություն և ուղղախոսություն», իսկ 6-րդ դասարանում «Բառակազմություն»/:Մայրենիի դասերին լեզվական գիտելիքներ հաղորդելու հմուտ ձևերն ու մեթոդները թողնված են ուսուցիչների հայեցողությանը:

Այստեղ օգնության են գալիս ուսուցչի փորձն ու վարպետությունը, կիրառած մեթոդները, հնարներն ու միջոցները:Ինչպես? և երբ? սովորեցնել լեզուն՝առանց մատնանշելու այն:

Արդեն մի քանի տարի է՝ ես մայրենի եմ դասավանդում 5-րդ և 6-րդ դասարաններում:Դասապրոցեսում աշակերտակենտրոն ուսուցման եղանակն ու այժմյան մեթոդներն ու հնարները հնարավորություն են տալիս ուսուցչին միասնացվախ/ինտեգրված/ դասերը արդյունավետ դարձնելու համար:

Իմ աշխատանքային փորձը թույլ է տալիս հասկանալու, որ յուրաքանչյու ուսուցչի առջև դրված է մի պատասխանատու և արժանապատիվ առաքելությունէ սովորողի մեջ գիտելիք, կարողություն, հմտություն և արժեքային կուռ համակարգ ձևավորելու առաքելությունը:

Յուրաքանչյուր սովորողի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքը կհանգեցնի լիարժեք նկատարյալ վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Արդի դարում ուսուցչի ուսերին է դրված սերնդի՝արժեքային համակարգով ձևավորված, դաստիարակությունը, ուսուցումն ու կրթությունը:

Ուստիուսուցիչներիս բարդ ու դժվարին աշխատանքով է,որ պետք է հասարակություն ձևավորվի բարձր արժեհամակարգով, գիտելիքով, կարողություններով և հմտություններով:

Ուսուցչին աջակից պետք է լինեն համապատասխան իրվասու օղակները, որոնք. ցավոք, հաճախ «տեղում չեն»: Վերջին տարիներին այս պատասխոնատու և առաքինի կոչմանը հաճախ ավելանում են նսեմացնող փառքը չեզոքացնող արտահայտություններ ուսուցչի հասցեին: Այնինչ սերնդիդաստիարակության ու կրթության գործը ստանձնած ուսուցիչը միայն հարգանքի ու խրախուսման է արժանի:

Մաս 1

Ձայնավորների և բաղաձայների ուսուցումը 5-րդ դասարանում

Ինչպես արդեն նշվեց, 5-րդ դասարանում լեզվական գիտելիքների ուսուցումը ընդգրկում է «Հնչյունաբանություն», «Ուղղագրություն և ուղղախոսություն» բաժինները:

«Հնչյունաբանություն» բաժնի ուսուցման հիմնական խնդիրը հայերենի հնչյունների տեսակները, նրանց ճիշտ գրությունն ու արտասանությունը սովորեցնելն է: Ձայնավորների և բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը ուսուցանելու համար ես կատարում եմ բազմաբնույթ աշխատանքներ, որոնք կնպաստեն հնչյունների ճիշտ գրությանը և ճիշտ արտասանությանը: Աշխատանքի ձևերն ու տեսակները բազմաթիվ են: Դրանցից ամենաարդյունավետ աշխատանքը, թերևս,բառարանային բազմաբնույթ աշխատանքներն են,դրանց տարբեր տեսակների գործածությունը՝բացատրական, ուղղագրական, անձնանունների, շփոթության տեղիք տվող բառերի և այլն:Քանի որ 5-րդ դասարանցին դեռևս կանոնակարգված և առանձին բաժիններով չի անցել լեզվական գիտելիքների մասին, ուստի աշխատում եմ ուսուցումը համատեղել խաղերի և խաչբառերի հետ:

Իմսրկարատև աշխատանքային փորձից համոզվել եմ, որ սովորողը ցանկացած կանոն ավելի հեշտ է սովորում խաղի միջոցով ու առանց այն անվանելու: Այստեղ մեզ օգնության են գալիս տարբեր տեսակի բառարանները:

5-րդ դասարանում կարող ենք օգտագործել մի շարք բառարանների տեսակներ.

1.Բացատրոկան/բառախմբի, անծանոթ բառի բացատրություն/

2.Ուղղագրական / բառի ճիշտ գրությունն ու ճիշտ արտասանությունը/

3Անձնանունների/տարբեր ձայնավորների կամ բաղաձայնների կանոններին վերաբերվող անձնանունների ստուգաբանություն/:

4.Շփոթության տեղիք տվող բառերի/ուշադրության արժանի բառազույգեր/:Օրինակ՝է ձայնավորի ուղղագրությունն ու ուղղախոսությունը ուսուցանելիս կարելի է կատարել այսպիսի աշխատանքներ.

ա/բացատրոկան բառարանում

էգ- իգական սեռին պատկանող կենդանի, կին կամ աղջիկ

էակ- շնչավոր արարած ,մարդ

էտել-գարնանը խաղողի վազի մատները, ինչպես նաև ծառերի ավելորդ ճյուղերն ու ոստերը կտրել, հեռացնել

բ/Անձնանունների բառարանում

Էմին- արաբական անուն է, որը նշանակում է ունեցվածքի պահապան, պահակ

գ/Ուղղագրական բառարանում

Էակ	Էլեոնորա
Էդուարդ	Էվելինա
Էմանուել	Էմմա

դ/Շփոթության տեղիք տվող բառերի բառարանում

որևէ-որևիցե

ինչևէ- ինչևիցե

երբևէ- երբևիցե

մանրէ- միջօրե

նախօրե- օրըստօրե

Բառարանային աշխատանքներից բացի կատարում եմ ուղղագրական ,քերականական տարաբնույթ աշխատանքներ խաղերի, խաչբառերի միջոցով:

Օրինակ.էջ բառից ստացիր ուլ բառը՝ ամեն անգամ մեկ տառ փոխելով. էջ-աջ-ալ-ուլ կամ

Լրացրու աղյուսակը[4].

բ/ Կամ լայնէկրան բառից ստացիր այլ բառեր.



բ/ Նույն աշխատանքային տարաբնույթ ձևերով ուսուցանում եմ բաղաձայնների ուղղագրական և ուղղախոսական կանոնները. Օրինակ՝ գ-կ-ք բաղաձայնների ուղղագրությունն ու աղղախոսությունը.

1.բացատրական բառարանում

մարգարե-Աստծո կամքը մարդկանց հայտնող, ապագան գուշակող[1]

մարգարիտ-թանկագին քար, արցունքի կաթիլ

բարաք-ժամանակավոր փայտե շինություն

բարակ-որսորդական շուն

գինարբուք- կերուխում, խրախճանք

գինարբուկ- ծաղիկ

մեղկ- թուլամորթ, փափուկ

մեղք- հանցանք

2. Ուղղագրական բառարանում

բարաք աքցան վարք

գինարբուք ճաքել սարք

թաքցնել կառք բերք

3. Շփեթություն առաջացնող բառարանում[2]

կառք-կարգ մեղք- մեղկ

վարք- վարկ թաքվնել- փակցնել

կարկին- կարգին փողք- փեղկ

բարաք-բարակ ճեղք- փեղկ

գինարբուք- գինարբուկ

Իմանալով բառերի բացատրությունը՝ սովորողը կարողանում է զանազանել և նհասկանալ նրանց գրության տարբերությունը

4. Անձնանունների բառարանում.

Մարգար-հայերոն մարգարե բառից է ,որ նշանակում է հեռատես, գուշակող

Սարգիս-ասորական անուն է, որ հայերի մեջ գործածվում է 6-րդ դարից

Այս բազմաբնույթ բառարանային աշխատանքներին գումարվում են այն բազմաթիվ մեթոդներն ու հնարները որոնք նպաստում են նյութի ընկալմանը՝ առանց զգալու դրանց ծավալն ու դժվարությունը:

Օրինակ. Եռաշարք բաղաձայնների ուղղագրության և ուղղախոսության մասին սովորած գիտելիքներն ամրապնդելու նպատակով «Անդրադարձն» անցկացնում եմ m-աձև աղյուսակով.

Բառեր, որոնց մեջ լսվում է ք, գրվում է գ	Բառեր, որոնց մեջ լսվում է ք, գրում է ք	Բառեր, որոնց մեջ լսվում է կ, գրվում է կ

Իսկ երկշարք բաղաձայնների ուղղագրության և ուղղախոսության մասին արդեն սովորած գիտելիքներն ամրապնդելու նպատակով՝ T-աձև աղյուսակով.

Բառեր, որոնք գրվում են խ-ով	Բառեր, որոնք գրվում են ղ-ով

Սովորածը գիտելիք, կարողություն և հմտություն է դառնում նաև գրքում տեղ գտած առաջադրանքների միջոցով/բառային/:

Այս և նմանատիպ աշխատանքներից հետո անդրադառնում եմ այն կանոններին, որոնք ուսուցանվում են/ինչ? սովորեցինք, ինչպես? Սովորեցինք, ինչու?սովորեցինք/:

Այս սովորածը իր արտացոլանքն է գտնում հայտորոշիչ, ուսուցողական և թեմատիկ գրավորներում:

Որպեսզի կարծիք չձևավորվի, թե «Մայրենիի» դասին լեզվական գիտելիքներն առանձնացված են գրականագիտական գիտելիքներից, ներկայացնեմ մայրենիի մի դասի թեմայի նկարագրություն՝ ծրագրով նապատեսված ժամաքանակով:

Թեմա- Վ.Սարոյան «Երեք խորհուրդ» հեքիաթը: Ղ-խ բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը /5ժամ/:

Դաս 1- Նպատակներն ու խնդիրները- .հասկանալով, անսխալ, տրամաբանորեն ընթերցում

. Ղ-խ ուղղագրության և ուղղախոսության առանձնահատկությունների իմացություն և գրության և արտասանության կանոնների զանազանում:

.Խոսքի հարստացում ղ-խ բաղաձայններով և տեքստից դրանց առանձնացում:

.Տրամաբանական, վերլուծական, ստեղծագործական, հաղորդակցական և համագործակցելու կարողությունների զարգացում:

.Գնահատելու, ինքնուրույն դատողություններ անելու և վերաբերմունք դրսևորելու հմտության ձևավորում:

.Իր արարաքների նկատմամբ պատասխանատու լինելու, համբերատարությամբ զինվելու, գիտելիքի/ իմաստնության/ կարևորությունն հասկանալու արժեհամակարգի ձևավորում:

Ընթացքը-Խթանում

Ժողովրդական ասացվածքների սահիկներով ցուցադրում իմաստնության , գիտելիքի, աշխատանքի մասին.

-Գիտունին եղիր գերի, անգետին մի' եղիր սիրելի:

-Գիտունի հետ քար քաշիր, անգետի հետ փլավ մի' կեր:

-Ասա' ով է ընկերդ, ասեմ ով ես դու[4]:

Տեղեկություններ օտարաղգի գրողներից Վ.Սարոյանի մասին:

Իմաստի ընկալում

-Հեքիաթի մի հատվածի ընթերցում՝ ուղղորդված ընթերցանությամբ:

-Այս հատվածի հիմնական գաղափարի վեր հանում/ծուլությունը չարիք է/:

-Ընթերցած հատվածի բովանդակության վերարտադրում սեփական բառերով:

-Անծանոթ բառերի բացատրություն՝ միջօրե, հետմիջօրե, պանդուխտ:

Կշռադատում

-ստեղծագործական կարողություններ զարգացնելու նպատակով զույգերովաշխատանքի կատարում,

-գտնել այն բառերը, որոնք խ են պարունակում,

-որոնք ղ են պարունակում,

-գտնել գրության և արտասանության տարբերությունը:

-Տնային աշխատանքի հանձնարարում՝ էջ 91-ի N2 առաջադրանքը և փոքրիկ շարադրանք՝ «Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն» թեմայով:

Դաս-2

Ընթացքը- Խթանում

-Տնային հանձնարանության ստուգում:

Խթանման փուլում կիրառել «Կանխագուշակումների աղյուսակ» մեթոդը՝ շարքերով:

Ինչ փաստեր կային	Ինչ եղավ	Ինչ է լինելու

Իմաստի ընկալում

_Ընթերցել 4-րդ հատվածը՝ ուղղորդված ընթերվանությամբ:

_Այս հատվածի հիմնական գաղափարի վեր հանում:

_Դասարանը բաժանում եմ խմբերի՝ ըստ ունեցած բառարանների տեսակների:

Խումբ-1/բացատրական/

-բացատրել բառերի իմաստը.

աղտ-

ախտ-

տաղտկալի

աղճատել-

նողկալի-

Խումբ-2/ուղղագրական/

_Ընդգծել դժվարություն ներկայացնող տառը.

Աղտ գաղթ ախտ

Տաղտկալի քաղցր թախտ

Ուղտ աղբ դրախտ

Սրախողխող պղտոր դժոխք

Մեղք թախիծ կմախք

Մեղկ թաթախել բախտ

Խումբ-3/հոմանիշային/

_Գտնել տրված բառերի հոմանիշները.

միջօրե-

պանդուխտ-

երկյուղ-

ծույլ-

խորհրդավոր-

ապերախտ-

Խումբ-4 /հականիշային/

_Գտնել տրված բառերի հականիշները.

ծախսել-

խաբեբա-

երախտագետ-

երկչոտ-

աղքատ-

_Տնային հանձնարարություն

Դաս-3

Ընթացքը-Խթանում

Տնային հանձնարարության ստուգում

Խթանման փուլն անցկացնում եմ «Մտագրոհ» մեթոդով,՝ խրատ հիմնաբառով:



-Ցուցադրել խրատներ՝ պաստառով.Բարձրանալիս բարևիր, որ իջնելիս չամաչես….

Իմաստի ընկալում

- 3-րդ հատվածի ընթերցում՝ ուղղորդված ընթերցանությամբ.

-բառերի իմաստի բացատրություն.

պերճանք-

կարկամել-

լպրծուն-

գունդուկծիկ-

Դասարանը բաժանում եմ 3 խմբի և տալիս հանձնարարություններ.

Խումբ -1

-Թախտից գցել և տախտակ պակաս դարձվածքներով և նրանց ուղիղ իմաստով կազմել նախադասություններ

-Լրացնել բաց թողնված վանդակները.

ու	ղ	տ				
ու	ղ	տ				
ու	ղ	տ				

Խումբ-2

-Այն որ բառն է, որի մի տառը հանելով կստանաս կովերի Խմբի անունը:Կազմիր նախադասություններ: -Լրացնել բաց թողնված վանդակները

	ա	խ			
	ա	խ			
	ա	խ			
	ա	խ			
	ա	խ			
	ա	խ			
	ա	խ			

Խումբ -3

- Գտնել տրված բառերի հոմանիշները

վախկոտ

թախծել

նախճիր

ուխտ

- Լրացնել բաց թողնված վանդակները[5].

				ու	խ	տ
				ու	խ	տ
				ու	խ	տ
				ու	խ	տ

Խմբերի աշխատանքների հանգամանորեն ստուգում:

Կշռադատում

-Ընթերցած հատվածի գաղափարի վեր հանում

-Պաստառի վրա ղ-խ բաղաձայնների ուղղագրության և ուղղախոսության 1-ին կանոնի ցուցադրում և պարզաբանում:

-Տնային հանձնարարություն՝ գրել շարադրանք «Որն է իսկական հարստությունը» թեմայով:

Դաս-4

Ընթացքը-Խթանում

-Տնային հանձնարարության ստուգում:

-Կիրառել «Մտագրոհ» մեթոդը՝ հարստություն հիմնաբառով.



Իմաստի ընկալում

-Հեքիաթի վերջին հատվածի ընթերցում՝ ուղղորդված ընթերցանությամբ:

-Այս հատվածի բառերի իմաստի բացատրություն.

երդիկ

ողջագուրվել

մայրամուտ

-Հեքիաթի բովանդակության վերարտադրում սեփական բառերով

-հերոսի բնութագրում,

-բառային աշխատանքի 3-րդ վարժության կատարում տետրերում:

Կշռադատում

-Պաստառի վրա ցուցադրել ղ-խ բաղաձայնների ուղղագրության և ուղղախոսության կանոնների 2-րդ կետի ցուցադրում:

-Բառակազմական գիտելիքներ զարգացնելու նպատակով գրատախտակին կատարել վարժություն 2-ը:

-Հանձնարարել տնային ՝ ընթերցել և հասկանալ ղ-խ բաղաձայնների գրության և արտասանության կանոնները:

-Հորինել հեքիաթի նոր ավարտ:

-Վերնագրել հատվածները:4

Դաս-5

Ընթացքը-Խթանում

-Տնային հանձնարարության ստուգում

Խթանման փուլն անցկացնել «հարցադրումների» մեթոդով.

-Արժեր? արդյոք խրատների համար ոսկիներ ծախսել:

-Դու կվճարեիր? ինչու?:

-Որն?էր քեզ դու եկած խորհուրդը:

Իմաստի ընկալում

Հեքիաթի բովանդակությունը վերարտադրել սեփական բառերով՝ հետևյալ հարցադրումներով:

Ինչ սովորեցինք	Ինչպես սովորեցինք	Ինչու սովորեցինք

Նույն աղյուսակը լրացնել ղ-խ բաղաձայնների ուղղագրության և ուղղախոսության կանոնների յուրոցումն ստուգելու համար:

-Գրել 10 բոպեանոց թելադրություն՝ ղ-խ բաղաձայնների շուրջ:

Կշռադատում

Այս փուլն անցկացնել «Քառաբաժան» մեթոդով.

Ինչ էի տեսնում	Ինչ էի զգում
Ինչ էի լսում	Ինչ հասկացա

-Հանձնարարել տնային՝ շարադրություն «Պանդխտությունը մեր օրերում և նրա հետևանքները» թեմայով: /Սեր դեպի հայրենիքը արժեհամակարգի ձևավորում/:

Այսքան աշխատանքներից հետո կարծում եմ սովորողը կկարողանա ճիշտ արտասանել և ճիշտ գրել ղ և խ բաղաձանն:

Մաս-2

Բառակազմական և բառագիտական գիտելիքների ուսուցումը 6-րդ դասարանում

6-րդ դասարանի լեզվական գիտելիքներն ամփոփվում են «Բառակազմություն» և «Բառագիտություն» թեմաներում:

Ամենաառաջին հերթին 6-րդ դասարանում պարապող ուսուցիչը պետք է բացատրի և աշակերտին հասցնի այն իրողությունը, որ հնչյունների միացումից ստացած ամենափոքր միավորը վանկն է, որի միացումից էլ ստանում ենք իմաստ ունեցող միավորը՝ բառը:Գրավոր և բանավոր խոսք կառուցելու ամենափոքր միավորը բառն է,իր տարբեր և բազմաթիվ իմաստներով:

Ուղիղ և փոխաբերական իմաստների գաղափարը տրվում է Գ.Մահարու «Իմ տատը» հատվածն ու Վ.Դավթյանի «Առաջին հուշ» բանաստեղծությունն ուսումնասիրելիս:

«Իմ տատը» հատվածն անցնելիս ընթերցանության, վերլուծական, ստեղծագործական, համագործակցային կարողությունների հետ մեկտեղ նպատակ եմ դնում իմ առջև՝կազմել բանավոր և գրավոր խոսք բազմիմաստ բառերով:Դրա համար կիրառում եմ բազմաբնույթ աշխատանքի ձևեր:

Օրինակ. ա/տալիս եմ բառազույգեր և հանձնարարում կազմել նախադասություններ այդ բառերի տարբեր իմաստներով.

թառ- թառ

բազուկ- բազուկ

հաց-հաց

փող-փող

բ/հանձնարարում եմ Վ.Դավթյանի «Առաջին հուշ» բանաստեղծությունից գտնել ուղիղ և փոխաբերական իմաստով գործածված բառերը և կիրառել նախադասություններում:

Բառերի տեսակներն՝ ըստ իմաստի և ձևի հարաբերության/հոմանիշ, հականիշ, համանուն /բառագիտական գիտելիքներն ուսուցանելիս հենվում եմ տրված նյութերի բովանդակությանվրա :

Օրինակ.հոմանիշների մասին գիտելիքներն ուսուցանում եմ «Ազնավուրը Ազնավուրի մասին» տեքստի վրա՝ այնտեղից գտնելով համանիշների զույգեր և դրանք կիրառելով նախադասություններում:

Հականիշները ուսուցանում եմ Հ.Մաթևոսյանի «Հացը» պատմվածքում՝ տարաբնույթ աշխատանքներ կատարելով տեքստի վրա:

Լ.դա Վինչիի «Որդիական երախտագիտություն» գրական նյութին զուգընթաց լեզվական նյութն է «Բառ և դաձվածք»-ը:

Այս թեմայի ժամանակ ընթերցելու, վերարտադրելու, որոնողական, համագործակցային, հետազոտական աշխատանքին զուգընթաց տալիս եմ ստեղծագործական աշխատանք՝ գտնել այն բառազույգերը, որոնք ունեն մեկ բառի նշանակություն:

Բառագործածության կարողությունները զարգացնելու նպատակով դասարանը բաժանում եմ խմբերի և նրանց տալիս եմ հարցաթերեթիկներ, որոնց մեջ բաց է թողնված բառախմբեր, որոնք պետք է լրացվեն դարձվածքներով:

«Բառակազմություն» քերականական քերականական բաժինը ամփոփված է Մ.Խարենացու «Հայկ և Բել»,Գ.Էմինի «Պատգամ», Հ.Սահյանի «Հայաստան ասելիս», Փ.Բուզանդի «Արշակ և Շապուհ» տեքստերում:Այս տեքստերի հիման վրա ուսուցանում եմ բառի բաղադրիչները, դրանց առանձնահատկությունները, նրանց միացումից ստացած նոր բառերի իմաստն ու նշանակությունը:

Բաղադրյալ բառեր կազմելու, «Բառակազմություն» թեման ուսումնասիրելիս կիրառում եմ «Զնագնդի» մեթոդը:

Օրինակ.-գետ

Գետ + ակ-գետակ /ածանց./

գետ +ափ - գետափ/բարդ/

գետ + ափն + յա-գետափնյա/բարդածանցավոր

Գծապատկերների միջոցով ուսուցանում և ամրապնդում եմ բառի բաղադրիչների մասին գիտելիքները[2]:



արմատ

ածանց վերջավորություն

Որպեսզի պատկերը հստակ երևա դասերի ընթացքում, նկարագրեմ Մայրենիի 1 դասի օրինակ.

Գեղարվեստական և գիտական խոսքի լեզվառճական առանձնահատկությունները ուսուցանվում ենՎ.Անանյանի «Սևանա լիճ» և Մ.Ղուկասյանի «Ուր է կղզյակն Սևանա» հատվածների հետ համընթաց:

Այս թեմաներն անցնելիս ապահովում եմ ներառարկայական և միջառարկայական կապը:

Ձևավորվում է արժեհամակարգը՝էկոլոգիական գիտակցություն, սեր դեպի բնությունը, հայրենասիրություն:Դրա հետ մեկտեղ 1 դասաժամ նվիրում եմ գիտական և գեղարվեստական խոսքի ամրապնդմանը:

Այս դասին նպատակ եմ դնում իմ առջև.

ա/համագործակցային ուսուցման միջոցով ստեղծել գիտելիքների մեծ պաշար:

բ/գիտելիքը գործնականում կիրառելու հմտություն:

գ/գրավոր և բանավոր խոսքի զարգացում:

դ/ գիտական և գեղարվեստական մտածողության զարգացում:

Խնդիր եմ դնում իմ առջև այս դասին հասնել այն բանին, որ երեխաները ընկալեն գեղարվեստական և գիտական խոսքի տարբերությունները, նրանց մեջ ձևավորվեն գեղարվեստական և գիտական խոսքի արժևորման կարողություններ և գրական ճաշակ:

Դասին կիրառում եմ «Վենի շրջօղակ», «2աստղիկ, 1դրոշակ», «Անդրադարձ» մեթոդները, քարտային աշխատանք:

Ընթացքը- Խթանում/5րոպե/

Խթանման փուլում առաջարկում եմ հանձնարարված բնագրից դուրս գրել պատկերավոր արտահայտություններն ու դրանցով կազմել նախադասություններ:

Իմաստի ընկալում /20ր/

Նախորդ դասն ընկալվում է «2աստղիկ, 1դրոշակ» հնարքով:

Յուրաքաչյու խմբի հանձնարարում եմ խթանիչ հարցերից մեկը:

Դասը բացատրվում է Վենի շրջողակով



Կշռադատում /15ր/

Դասարանը բաժանում եմ խմբերի և խմբերին տալիս եմ 1 հարց՝ քարտի տեսքով:

Խումբ 1- Օգտվելով մանկական հանրագիտարանից որևէ բառահոդված ընտրել և վերամշակել:

Խումբ2-Մյուս առարկաների դասագրքերից դուրս գրել գիտական բառեր և կազմել աղյուսակ:

Խումբ 3- Բնագրից առանձնացնել պատկերավոր արտահայտություններ և հորինել փոքրիկ շարադրանք /5-6 նախադասությամբ/:

Խմբերը ներկայացնում են կատարած աշխատանքները, կատարվում է դրանց վերլուծություն: Առաջադրանքի կատարմանը հաջորդում է

Անդրադարձը /5ր/

Անդրադարձի ընթացքում լրացնում եմ եռաշարք աղյուսակը /m-աձև/:

Ինչ	ինչպես	ինչու

արեցինք		

Հանձնարանվում է տնային աշխատանք՝ հորինել բնագրի ավարտի սեփական տարբերակը:

Գնահատումը կատարվում է՝ ըստ Բլումի տաքսոնոմիայի /ԳԿՀ/ 6

Մեկ ուրիշ դասի օրինակ 6-րդ դասարանում

Թեմա-Մ.Գալշոյան «Կռունկ»:Միասին, անջատ և գծիկով գրվող բառեր:

Մի շարք սոցիալական նպատակների, արժեհամակարգի ձևավորման հետ մեկտեղ լեզվական կարողություններ և հմտություններ զարգացնելու ուղղությամբ իմ առջև նպատակ եմ դնում ուսուցանել բաղադրյալ բառերի և հնչյունափոխված արմատների անսխալ գրությունը, բառակազմական վերլուծությունը, բառի կառուցվածքի ընկալումը և նրա բաղադրիչ տարրերի ճանաչումը: Լեզվական գիտելիքների/ բարդ բառերի գրության ձևերը/ ամփոփելուն և ամրապնդելուն եմ նվիրու 1 դաս:

Ընթացքը-Խթանում

Առաջարկում եմ արդեն յուրացրած “Կռուկ” նյութից գտնել բարդ բառերը և բացատրել գրության ձևերը:

Իմաստի ընկալում

Դասարանը բաժանում եմ երեք խմբի և յուրաքանչյուրին տալիս եմ նախօրոք գրված տեքստեր՝ քարտերի տեսքով:

Խումբ 1-Տեքստիվ դուրս գրել միասին/համադիր/ գրվող բարդ բառերը և նշել դրանց արմատներն ու գրության դեպքերը:

Խումբ 2-Տեքստից դուրս գրել գծիկով գրվող բարդ բառերը, գտնել դրանց արմատները և նշել գրության դեպքերը:

Խումբ 3-Տեքստից դուրս գրել անջատ գրված /հարադիր/ բարդ բառերը և թվել դրանց գրության դեպքերը:

Կշռադատում

Կշռադատման փուլն անցկացնում եմ m-աձև աղյուսակի միջոցով, որը լրացնում են համապատասխան պմբի անդամները;

Միասին գրվող բարդ	Անջատ գրվող բարդ բառեր	Գծիկով գրվող բարդ բառեր

բառեր		

Աղյուսակը լրացնելուց հետո կատարել անդրադարձ՝ հարցադրումների մեթոդով:

Ինչ? սովորեցինք

Ինչպես? սովորեցինք,

Ինչու? Սովորեցինք

Գնահատումը կատարվում է «Փոխադարձ գնահատում» մեթոդով:

Հանձնարանում եմ տնային աշխատանք՝ գրել շարադրություն «Կռունկը հայի կյանքում» վերնագրով, որը հագեցած լինի բարդ բառերի գրության ձևերով;

Այսպիսի բազմաբնույթ ա՛խատանքներ կատարելուց հետո կասկած չի մնում՝ հավատալու, որ 5-րդ և 6-րդ դասարաններում սովորողը կկարողանա գիտելիքների հիմնավոր պաշար ձեռք բերել «Ուղղագրություն և ուղղախոսություն», «Բառագիտություն» և «Բառակազմություն» քերականական նաժիններից և կկարողանա ձեռք բերված գիտելիքը կիրառել գրավոր և բանավոր խոսքում, որի արդյունքում կունենա հարուստ և գրագետ բառապաշար:

Այս ամենի հետ մեկտեղ Մայրենիի դասերին սովորողների մեջ ձևավորվում է սոցիալական հմտություններ և արժեքային համականգ:

Այն իրականացնում եմ հիմնականում խմբային եղանակով ուսուցանելու ընթացքում:

Սոցիալական հմտություններից է համագործակցությունը, ուրիշին լսելու կարողությունը, հանդուրժողականությունը, կարծիք հայտնելու կարողությունը և այլն:

Արժեքային համակարգը ձևավորվում է հիմնականում գրական թեմաներն ուսուցանելիս, քանի որ գիտելիքը կարողություն և հմտություն դարձնելու գագաթնակետը, ի վերջո, արժեքային համակարգի ձևավորումն է, որնէ. հայենասիրություն, սեր դեպի բնությունը, ազգային ավանդույթները, սեփական անձի նկատմամբ վստահությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, Մայրենիի դասագրքով սովորողը, ինչպես նշեցինք, համակարգված ուսումնասիրում է լեզվական և գրական նյութերը՝ շաղկապելով դրանք միմյանց հետ:

Սակայն այս ուսումնական տարվա մուտքը տարբերվում է մյուս տարիներից. խառնաշփոթ է տիրում դպրոցներում. պահանջում են ուսուցչից՝ չգիտեն, թե ինչ:

5-րդ դասարանի մայրենիի լեզվական նյութը շիլաշփոթի է նման.

Հ. Լեզվի տարբեր բաժիններից մի քիչ, մի քիչ, ընդ որում, “Շարահյուսություն” բաժնի գիտելիքները հենց տարեսկզբին:

Առանց ստանալու համապատասխան գիտելիքներ հնչյունաբանությունից, ուղղագրությունից, ուղղախոսությունից, ինչպես կարելի է անցնել” Բառագիտություն” թեմային:

Եվ ինչ է ստացվում. Մի կողմից պահանջվում է “Օրինաչափություն” խաչվող հասկացություն, իսկ մյուս կողմից խախտվում է այդ նույն օրինաչափությունը:

Յուրաքանչյուր ուսուցչի տարիների ձորձը վկայում է, որ լոգուն սկսվում է հնչյունից, ուսուցանվում նյթը պարզից բարդ սկզբունքով, բայց… Արի ու տես, պահանջում են ուսուցանել բարդից պարզ սկզբունքով:Օրինակ. Առանց իմանալու բառերի մասին , ինչպես ուսուցանենք ածանցները և այլն , և այլն, թերությունները շատ- շատ են:

Այստեղ ևս «առյուծի բաժին» բեռը թողնված է ուսուցչի ,առանց այդ էլ , տքնաջան ուսերին:

Ես հուսով եմ, որ վերջ ի վերջո մեր մտահոգություններին ականջալուր կլինեն և կմտածեն սերնդի արժանավայել ուսուցման և դաստիարակության մասին, ուսուցչին մենակ չեն թողնի այս խաժամուժ իրականության մեջ:

Օգտագործված գրականություն

1.Դ.Գյուրջինյան-Մայրենի , դասագիրք

2.Թ.Ալեքսանյան- գիրք 6-րդ դասարանի համար

3.Ա.Գալստյան- Մայրենի- դասագիրք 5-րդ դասարանի համար:Էդիտ Պրինտ-2012

4.Գ.Մկրտչյան,Ն.Տողանյան-Մայրենի 5-6:Մեթոդական ձեռնարկ-Եր.:Զանգակ-97

5. Գ.Մկրտչյան-Ուղղագրական ժամանց-Եր.:Հեղինակային հրատարակություն-2007:

6. Ուսուցման արդյունավետ հնարներ/Ս.Խաչատրյան-Եր.Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան-2020- 74 էջ